

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

պարոն ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Աբրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Վիկտոր Դավաթյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Շքեղության հարկի մասին» և «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ:

1. Շքեղության հարկի ներդրման հիմնական նպատակը պետք է լինի բնակչության համեմատաբար հարուստ խավից լրացուցիչ հարկերի հավաքագրումը: Այդ կապակցությամբ հայտնում ենք, որ Հայաստանի Հանրապետությունում ֆիզիկական անձանց համար արդեն իսկ սահմանված են եկամտային և գույքային հարկերի պրոգրեսիվ դրույքաչափեր: Դա նշանակում է, որ բարձր եկամուտներ և (կամ) մեծ սեփականություն ունեցող անձինք հարկերը վճարում են ավելի մեծ չափով և, հետևաբար, նոր հարկատեսակի ներդրման անհրաժեշտություն չկա: Իսկ եթե, այնուամենայնիվ, նախագիծը ներկայացնելու նպատակը հասարակության հարուստ խավի հարկային բեռի վերանայումն է, ապա առավել նպատակահարմար ենք համարում դա կատարել

գույքային և եկամտային հարկերի մասին օրենքներում համապատասխան փոփոխությունների կատարման միջոցով:

2. Համաձայն «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի՝ հարկվող միևնույն օբյեկտը հաշվետու ժամանակաշրջանում նույն տեսակի հարկով կարող է հարկվել միայն մեկ անգամ: Չնայած այն հանգամանքին, որ խոսքը շքեղության հարկի մասին է, այնուամենայնիվ, դրա ներդրումը կհանգեցնի հողի հարկով և գույքահարկով հարկվող միևնույն օբյեկտի կրկնակի հարկման, ինչն անընդունելի է: Ավելին, նախագծով առաջարկվում է որոշ դեպքերում միևնույն հարկվող օբյեկտի եռակի հարկում: Մասնավորապես, հաշվի առնելով այն հանգամանքը, որ, համաձայն նախագծի 7-րդ հոդվածի, հարստության (ունեցվածքի) հարկման բազայում ներառվում է շքեղության հարկով հարկման ենթակա ամբողջ գույքը, ստացվում է, որ հարկվող միևնույն օբյեկտը նախ հարկվում է հողի հարկով կամ գույքահարկով, ապա՝ հողամասի, բնակելի տարածքի կամ առանձնատան համար սահմանվող շքեղության հարկով, իսկ արդեն երրորդ փուլում՝ հարստության (ունեցվածքի) հարկով:

3. Նախագծի ընդունման հիմնավորմամբ որևէ կերպ հիմնավորված չեն այն ֆիզիկական կամ արժեքային չափանիշները, որոնց համաձայն հողամասը, գույքը կամ այլ ակտիվները որակվում են որպես շքեղություն: Բնակարանների պարագայում հաշվի չեն առնվում անգամ բնակելի տարածության համար նախկինում սահմանված սանիտարական նորմերը: Այսպես, 40 քառակուսի մետրը գերազանցող բնակելի մակերեսով յուրաքանչյուր բնակարանի համար նախատեսվում է շքեղության հարկի գանձում: Նախկինում սանիտարական նորմը մեկ անձի համար սահմանված է եղել մոտավորապես 18 քառակուսի մետրի չափով: Հետևաբար, բնակարանում 3 անձի բնակության դեպքում նախագծով սահմանված 40 քառակուսի մետր չհարկվող շեմն արդեն իսկ պակաս է նշված սանիտարական նորմից: Բացի դրանից, գտնում ենք,

որ, բնակարանների պարագայում շքեղության հարկով հարկման օբյեկտը որոշելիս, պետք է հաշվի առնվի միայն բնակարանի նկատմամբ սեփականության իրավունք ունեցողների և ոչ թե նաև բնակարանում փաստացի բնակվողների թիվը:

4. Նախագծի համաձայն, բնակելի տարածքների և հողամասերի համար շքեղության հարկով հարկման բազան որոշվում է՝ ելնելով դրանց մակերեսի չափից: Նման մոտեցումը համարում ենք ոչ նպատակահարմար՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ բնակելի տարածքների նշանակությունից, գտնվելու վայրից, աշխարհագրական դիրքից, ինչպես նաև տնտեսական առանձնահատկություններից (իսկ հողամասերի համար՝ նաև բերրիությունից) կախված՝ դրանց շուկայական արժեքները կարող են խիստ տարբեր լինել: Այս առումով անհրաժեշտ է տարբերակել բնակելի տարածքների և հողամասերի շքեղության չափանիշները՝ սահմանելով հարկման բազայի խելամիտ և հիմնավորված չափեր:

5. Նախագծով սահմանված դրույքաչափերն անհիմն բարձր են, ինչը, կարծում ենք, կնպաստի բոլոր հնարավոր ձևերով հարկումից խուսափելու շահագրգռվածության ձևավորմանը:

6. Ինչ վերաբերում է ինքնաթիռների և ուղղաթիռների հարկման (այդ թվում՝ գույքահարկով) խնդրին (ըստ նախագծի՝ այն տարածվում է նաև իրավաբանական անձանց վրա), ապա դա հակասելու է Հայաստանի Հանրապետության միջազգային համաձայնագրերին, Քաղաքացիական ավիացիայի միջազգային կոնվենցիայի (Չիկագոյի կոնվենցիա) դրույթներին և Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպության (ԻԿԱՕ) կողմից հրապարակված միջազգային ստանդարտներին:

7. Նախագծի համաձայն, շքեղության հարկով հարկման ենթակա են նաև դրամական միջոցները, արժեթղթերը, արտարժույթը, ինչպես նաև մշակութային արժեք ունեցող

գեղանկարչության, քանդակագործության, գրաֆիկայի և կերպարվեստի այլ ստեղծագործությունները, թանկարժեք քարերի և ոսկյա իրերի բարձրարժեք նմուշները կամ դրանց հավաքածուները: Այդ կապակցությամբ հայտնում ենք, որ`

1) դրամական միջոցների հարկումը տրամաբանական ու արդարացի համարվել չի կարող, քանի որ այդ դրամական միջոցները կարող են ձևավորված լինել արդեն իսկ նախկինում հարկված եկամուտների արդյունքում: Հետևաբար, դրամական միջոցների հարկումը նույնպես կհանգեցնի կրկնակի հարկման.

2) արժեթուղթն ինքնին հարկվել չի կարող, քանի որ այն որոշակի իրավունքներ ամրագրող փաստաթուղթ է: Հարկման կարող է ենթարկվել արժեթղթից ստացվող եկամուտը: Ընդ որում, վերջիններիս հարկման հարաբերությունները կարգավորված են գործող օրենսդրությամբ (մասնավորապես, ֆիզիկական անձանց` արժեթղթերից ստացվող եկամուտներն ազատված են եկամտահարկից, իսկ ռեզիդենտ կազմակերպությունների կողմից ստացվող շահաբաժինները` շահութահարկից):

Միաժամանակ, հայտնում ենք, որ արժեթղթերից ստացվող` հարկման ենթակա եկամուտների տեսակների ընդլայնումը համարում ենք ոչ նպատակահարմար` հաշվի առնելով այն հանգամանքը, որ քաղաքականության նման ուղղությունը կարող է հանգեցնել ներդրումային ակտիվության (հատկապես ֆիզիկական անձանց մասով) անկման.

3) նշված ակտիվների, մասնավորապես, դրամական միջոցների և արտարժույթի համար հարկման մեխանիզմներ սահմանելը հնարավոր չէ` հաշվի առնելով այն հանգամանքը, որ այդ ակտիվները, հանդիսանալով վճարամիջոց, ժամանակի ընթացքում փոխարինվում են այլ ակտիվներով:

8. Նախագծով բացարձակապես անդրադարձ չկա գույքի նկատմամբ սեփականության ձևերին (ընդհանուր համատեղ, ընդհանուր բաժնային), և տրված չեն հարկվող օբյեկտի կամ հարկման մեխանիզմի առաջարկվող մոտեցումները:

9. Մշակութային (ոչ նյութական) արժեքները հարկման ենթակա շքեղության առարկաների ցանկում ներառելը, կարծում ենք, արդարացված չէ, քանի որ դրանց նկատմամբ սեփականության իրավունքի առաջացումը կարող է ժառանգության կամ նվիրատվության արդյունք լինել և ընդհանրապես կապված չլինել սեփականատիրոջ մեծ եկամուտների հետ:

10. Նախագծով առաջարկվող հարստության (ունեցվածքի) հարկման առումով կարևոր է նաև այն, թե ինչպես է որոշվելու շարժական գույք հանդիսացող ունեցվածքի նկատմամբ սեփականության իրավունքը, ինչպես է այն հարկվելու, գույքի նշված տեսակների հայտարարագրում նախատեսվելու է, թե ոչ:

11. Նախագծի 8-րդ հոդվածի վերաբերյալ հայտնում ենք, որ այն հակասում է «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 6-րդ մասին, որի համաձայն բյուջեի բոլոր ելքերը պետք է ծածկվեն բյուջեի մուտքերով, այսինքն՝ մուտքերը չեն կարող կապվածություն ունենալ որոշակի ելքերի հետ՝ բացառությամբ նպատակային բյուջետային մուտքերի ստացման դեպքերի կամ, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նպատակային բյուջետային ֆոնդերի ստեղծման դեպքում, դրանց մուտքերի:

Հայտնում ենք նաև, որ մեր կողմից կատարված ուսումնասիրությունների արդյունքների համաձայն ԱՊՀ անդամ երկրներից ոչ մեկում շքեղության հարկ չի կիրառվում: Շքեղության հարկ կիրառվում է զարգացած երկրներում, մասնավորապես, Սկանդինավյան երկրներում, Անգլիայում, Ավստրիայում, Գերմանիայում: Ընդ որում, շքեղության հարկի գումարը որոշվում է

գույքի և (կամ) եկամուտների մասին հայտարարագրի հիման վրա, իսկ դրա առավելագույն դրույքաչափը չի գերազանցում հարստության (ունեցվածքի) 1.8 տոկոսը:

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը դեմ է ներկայացված տեսքով օրենքների նախագծերի փաթեթի ընդունմանը:

Միաժամանակ, Հայաստանի Հանրապետության կառավարությունը, կիսելով օրենսդրական նախաձեռնության հեղինակի տեսակետը շքեղության հարկի սահմանման հարցում, հեղինակին առաջարկում է համագործակցել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ՝ խնդրի կարգավորման երկուստեք ընդունելի մեխանիզմների մշակման գործում:

Հայտնում ենք, որ, ներկայացված օրենքների նախագծերի փաթեթը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի տեղակալ Սուրեն Կարայանը:

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Նախագիծ
Պ-847-16.03.2010-ՏՀ-010/0

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

Շքեղության հարկի մասին

Հողված 1. Օրենքի կարգավորման առարկան

Սույն օրենքը սահմանում է շքեղություն համարվող սեփականության համար նախատեսվող հարկատեսակների դրույքաչափերը եւ կարգավորում է դրանց վճարման հետ կապված հարաբերությունները:

Հողված 2. Շքեղության հարկի օբյեկտները

Սույն օրենքի իմաստով շքեղություն են համարվում որոշակի չափաքանակներ եւ արժեք ունեցող սեփականության հետեւյալ օբյեկտները՝ հողամասերը, բնակարանները, առանձնատները, անձնական օգտագործման մարդատար ավտոմեքենաները, ուղղաթիռները, ինքնաթիռները, մոտոբանավակները, առագաստանավերը, դրամական միջոցները, արժեթղթերը, արտարժույթը, ինչպես նաեւ մշակույթային արժեք ունեցող գեղանկարչության, քանդակագործության, գրաֆիկայի եւ կերպարվեստի այլ ստեղծագործությունները, թանկարժեք քարերի եւ ոսկյա իրերի բարձրարժեք նմուշները կամ դրանց հավաքածուները:

Դրանց հաշվառման եւ գնահատման կարգը սահմանում է կառավարությունը:

Հողված 3. Շքեղության հարկ վճարողները

Շքեղության հարկ վճարողներ են համարվում սույն օրենքի 2-րդ հոդվածում սահմանված շքեղության հարկի օբյեկտների սեփականատեր հանդիսացող անձինք:

Շքեղության հարկը վճարվում է Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող, ինչպես ռեզիդենտ այնպես էլ ոչ ռեզիդենտ ֆիզիկական եւ իրավաբանական անձանց կողմից:

Հողված 4. Հողամասի հարկումը

1. Հայաստանի Հանրապետության քաղաքացին, Հայաստանի Հանրապետության քաղաքացի չհանդիսացող կամ քաղաքացիություն չունեցող անձինք, որոնց սեփականության իրավունքով պատկանող եւ Երեւան քաղաքի վարչական սահմաններից դուրս գտնվող հողամասի չափը գերազանցում է 10 հեկտարը՝ վճարում է տարեկան հարկ հետեւյալ դրույքաչափերով՝

ա) մինչեւ 30 հեկտարը՝ հողամասի գերազանցող մասի հողի կադաստրային արժեքի 5 տոկոսը,

բ) մինչեւ 50 հեկտարը՝ հողամասի գերազանցող մասի հողի կադաստրային արժեքի 10 տոկոսը,

գ) 70 եւ ավելի հեկտարտը՝ հողամասի գերազանցող մասի հողի կադաստրային արժեքի 20 տոկոսը:

2. Հայաստանի Հանրապետության քաղաքացին, որին սեփականության իրավունքով պատկանող եւ Երեւան քաղաքի վարչական սահմաններում գտնվող հողամասի չափը գերազանցում է 1 հեկտարը վճարում է տարեկան հարկ հետեւյալ դրույքաչափերով՝

ա) մինչեւ 3 հեկտարը՝ հողամասի գերազանցող մասի հողի կադաստրային արժեքի 20 տոկոսը,

բ) մինչև 5 հեկտարը՝ հողամասի գերազանցող մասի հողի կադաստրային արժեքի 25 տոկոսը,

գ) 10 եւ ավելի հեկտարը՝ հողամասի գերազանցող մասի հողի կադաստրային արժեքի 30 տոկոսը:

3. Հայաստանի Հանրապետության քաղաքացի չհանդիսացող կամ քաղաքացիություն չունեցող անձինք, որոնց սեփականության իրավունքով պատկանող եւ Երեւան քաղաքի վարչական սահմաններում գտնվող հողամասի չափը գերազանցում է 1 հեկտարը վճարում են տարեկան հարկ հետեւյալ դրույքաչափերով՝

ա) մինչև 3 հեկտարը՝ հողամասի գերազանցող մասի հողի կադաստրային արժեքի 40 տոկոսը,

բ) մինչև 5 հեկտարը՝ հողամասի գերազանցող մասի հողի կադաստրային արժեքի 50 տոկոսը,

գ) 10 եւ ավելի հեկտարը՝ հողամասի գերազանցող մասի հողի կադաստրային արժեքի 60 տոկոսը:

Սույն հողվածի դրույթները տարածվում են նաեւ իրավաբանական անձանց վրա:

Հոդված 5. Բնակելի տարածքի հարկումը

1. Երեւան քաղաքի վարչական սահմաններից դուրս գտնվող եւ բազմաբնակարան շենքում սեփականության իրավունքով բնակարան ունեցող Հայաստանի Հանրապետության քաղաքացին, որի զբաղեցրած բնակելի տարածքի (մակերեսի) չափը գերազանցում է 80 քառակուսի մետրը յուրաքանչյուր բնակարանի համար վճարում է տարեկան հարկ՝ գերազանցող բնակելի տարածքի (մակերեսի) արժեքի 10 տոկոսի չափով: Սույն դրույթը չի տարածվում այն բնակարանների վրա, որտեղ սեփականության իրավունքով բնակվում են 4 եւ ավելի անձինք:

2. Երեւան քաղաքի վարչական սահմաններում գտնվող եւ բազմաբնակարան շենքում սեփականության իրավունքով բնակարան ունեցող Հայաստանի Հանրապետության քաղաքացին, որի զբաղեցրած բնակելի տարածքի (մակերեսի) չափը գերազանցում է 40 քառակուսի մետրը յուրաքանչյուր բնակարանի համար վճարում է տարեկան հարկ՝ գերազանցող բնակելի տարածքի (մակերեսի) արժեքի 20 տոկոսի չափով:

Սույն դրույթը չի տարածվում այն բնակարանների վրա, որտեղ սեփականության իրավունքով բնակվում են 4 եւ ավելի անձինք:

3. Երեւան քաղաքի վարչական սահմաններից դուրս գտնվող եւ բազմաբնակարան շենքում սեփականության իրավունքով բնակարան ունեցող Հայաստանի Հանրապետության քաղաքացի չհանդիսացող կամ քաղաքացիություն չունեցող անձը, որի զբաղեցրած բնակելի տարածքի (մակերեսի) չափը գերազանցում է 80 քառակուսի մետրը յուրաքանչյուր բնակարանի համար վճարում է տարեկան հարկ՝ գերազանցող բնակելի տարածքի (մակերեսի) արժեքի 20 տոկոսի չափով:

4. Երեւան քաղաքի վարչական սահմաններում գտնվող եւ բազմաբնակարան շենքում սեփականության իրավունքով բնակարան ունեցող Հայաստանի Հանրապետության քաղաքացի չհանդիսացող կամ քաղաքացիություն չունեցող անձը, որի զբաղեցրած բնակելի տարածքի (մակերեսի) չափը գերազանցում է 40 քառակուսի մետրը յուրաքանչյուր բնակարանի համար վճարում է տարեկան հարկ՝ գերազանցող բնակելի տարածքի (մակերեսի) արժեքի 40 տոկոսի չափով:

5. Երեւան քաղաքի վարչական սահմաններից դուրս գտնվող եւ 400 քառակուսի մետրը գերազանցող առանձնատան սեփականատեր Հայաստանի Հանրապետության քաղաքացին յուրաքանչյուր առանձնատան համար վճարում է տարեկան հարկ հետեւյալ դրույքաչափերով՝

ա) մինչեւ 500 քառակուսի մետրը՝ գերազանցող բնակելի տարածքի (մակերեսի) արժեքի 2,5 տոկոսի չափով,

բ) մինչեւ 650 քառակուսի մետրը՝ գերազանցող բնակելի տարածքի (մակերեսի) արժեքի 5 տոկոսի չափով,

գ) մինչեւ 800 եւ ավելի քառակուսի մետրը՝ գերազանցող բնակելի տարածքի (մակերեսի) արժեքի 10 տոկոսի չափով:

6. Երեւան քաղաքի վարչական սահմաններում գտնվող եւ 300 քառակուսի մետրը գերազանցող առանձնատան սեփականատեր Հայաստանի Հանրապետության քաղաքացին յուրաքանչյուր առանձնատան համար վճարում է տարեկան հարկ հետեւյալ դրույքաչափերով՝

ա) մինչը 500 քառակուսի մետրը՝ գերազանցող բնակելի տարածքի (մակերեսի) արժեքի 10 տոկոսի չափով,

բ) մինչը 650 քառակուսի մետրը՝ գերազանցող բնակելի տարածքի (մակերեսի) արժեքի 20 տոկոսի չափով,

գ) մինչը 800 եւ ավելի քառակուսի մետրը՝ գերազանցող բնակելի տարածքի (մակերեսի) արժեքի 40 տոկոսի չափով:

7. Երեւան քաղաքի վարչական սահմաններից դուրս գտնվող եւ 400 քառակուսի մետրը գերազանցող առանձնատան սեփականատեր Հայաստանի Հանրապետության քաղաքացի չհանդիսացող կամ քաղաքացիություն չունեցող անձը վճարում է տարեկան հարկ հետեւյալ դրույքաչափերով՝

ա) մինչեւ 500 քառակուսի մետրը՝ գերազանցող բնակելի տարածքի (մակերեսի) արժեքի 5 տոկոսի չափով,

բ) մինչեւ 650 քառաուսի մետրը՝ գերազանցող բնակելի տարածքի (մակերեսի) արժեքի 10 տոկոսի չափով,

գ) մինչև 800 եւ ավելի քառակուսի մետրը՝ գերազանցող բնակելի տարածքի (մակերեսի) արժեքի 20 տոկոսի չափով:

8. Երեւան քաղաքի վարչական սահմաններում գտնվող եւ 300 քառակուսի մետրը գերազանցող առանձնատան սեփականատեր Հայաստանի Հանրապետության քաղաքացի չհանդիսացող կամ քաղաքցիություն չունեցող անձը վճարում է տարեկան հարկ հետեւյալ դրույքաչափերով՝

ա) մինչև 500 քառակուսի մետրը՝ գերազանցող բնակելի տարածքի (մակերեսի) արժեքի 20 տոկոսի չափով,

բ) մինչև 650 քառակուսի մետրը՝ գերազանցող բնակելի տարածքի (մակերեսի) արժեքի 40 տոկոսի չափով,

գ) մինչև 650 քառակուսի մետրը՝ գերազանցող բնակելի տարածքի (մակերեսի) արժեքի 80 տոկոսի չափով:

Հոդված 6. Անձնական օգտագործման մարդատար ավտոմեքենայի հարկումը

Հայաստանի Հանրապետության քաղաքացին, Հայաստանի Հանրապետության քաղաքացի չհանդիսացող կամ քաղաքացիություն չունեցող անձինք անձնական օգտագործման մարդատար ավտոմեքենայի համար, որի արժեքը գերազանցում է 30.000 ԱՄՆ դոլարը, յուրաքանչյուր ավտոմեքենայի համար վճարում են տարեկան հարկ հետեւյալ դրույքաչափերով՝

ա) մինչև 50.000 ԱՄՆ դոլարը՝ ավտոմեքենայի արժեքի գերազանցող մասի 10 տոկոսի չափով,

բ) մինչև 100.000 ԱՄՆ դոլարը՝ ավտոմեքենայի արժեքի գերազանցող մասի 15 տոկոսի չափով,

գ) 100.000 եւ ավելի ԱՄՆ դոլարը՝ ավտոմեքենայի արժեքի գերազանցող մասի 25 տոկոսի չափով:

Սույն հոդվածի դրույթները տարածվում են նաեւ իրավաբանական անձանց վրա:

Հոդված 7. Հարստության (ունեցվածքի) հարկումը

Հայաստանի Հանրապետությունում հարստություն (ունեցվածք) ունեցող յուրաքանչյուր ոք, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետությունից դուրս հարստություն (ունեցվածք) ունեցող Հայաստանի Հանրապետության քաղաքացին անկախ իր տարեկան եկամտի չափից, էթե ունի 500.000 ԱՄՆ դոլարին համարժեք սեփականության օբյեկտներ՝ հողամասեր, բնակարաններ, առանձնատներ, անձնական օգտագործման մարդատար ավտոմեքենաներ, ուղղաթիռներ, ինքնաթիռներ, մոտորանավակներ, առագաստանավեր, դրամական միջոցներ, արժեթղթեր, արտարժույթ, ինչպես նաեւ մշակույթային արժեք ունեցող գեղանկարչության, քանդակագործության, գրաֆիկայի եւ կերպարվեստի այլ ստեղծագործություններ, թանկարժեք քարերի եւ ոսկյա իրերի բարձրարժեք նմուշներ կամ դրանց հավաքածուներ, տարեկան վճարում է հարստության (ունեցվածքի) համար հարկ հետեւյալ դրույքաչափերով՝

ա) մինչև 800.000 ԱՄՆ դոլարը՝ հարստության (ունեցվաքի) ընդհանուր արժեքի գերազանցող մասի 20 տոկոսի չափով,

բ) 800.000 ԱՄՆ դոլար եւ ավելիի դեպքում՝ հարստության (ունեցվաքի) ընդհանուր արժեքի գերազանցող մասի 40 տոկոսի չափով:

Սույն հոդվածի դրույթները տարածվում են նաև իրավաբանական անձանց վրա:

Հոդված 8. Շքեղության հարկի օգտագործումը

Շքեղության հարկի վճարումից ստացված ֆինանսական միջոցները փոխանցվում են պետական բյուջե եւ օգտագործվում են բացառապես սոցիալական պաշտպանության ծախսերը՝ այդ թվում կենսաթոշակները, ծնելիության խթանումը, ընտանեկան նպաստները, գործազրկության նպաստները, հաշմանդամության, վատառողջության եւ անաշխատունակության նպաստները եւ միանվագ դրամական օգնությունը ֆինանսավորելու, ինչպես նաև բնակչության անապահով խավերի բուժօգնության ծախսերը պետական պատվերի շրջանակում իրականացնելու նպատակով:

Հոդված 9. Պատասխանատվությունը սույն օրենքի դրույթները խախտելու համար

Սույն օրենքի դրույթների խախտումը առաջացնում է օրենքով սահմանված պատասխանատվություն:

Հոդված 10. Օրենքի ուժի մեջ մտնելը

Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2011 թվականի հունվարի 1-ից:

Սույն օրենքը տարածվում է 1991 թվականի սեպտեմբերի 21-ից հետո ձեռք բերված շքեղություն համարվող սեփականության վրա:

Նախագիծ
Պ-8471-16.03.2010-SՀ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«Հարկերի մասին Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին

Հոդված 1. «Հարկերի մասին Հայաստանի Հանրապետության 1997 թվականի մայիսի 12-ի թիվ ՀՕ-107 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 12-րդ հոդվածի 1-ին մասի վերջում լրացնել «եւ շքեղության հարկե բառերը:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2011 թվականի հունվարի 1-ից:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՇՔԵՂՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԻ ՄԱՍԻՆԷ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻԷ ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԵՐԻ ՄԱՍԻՆԷ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆԷ ՕՐԻՆԱԳԾԵՐԻ

Օրինագծի փաթեթը մշակելիս հաշվի է առնվել հայաստանյան այսօրվա իրականությունը, ինչպես նաև ուսումնասիրվել է միջազգային փորձը: ԱՊՀ երկրներից շքեղության հարկի մասին օրենք գործում է Ուկրաինայում, իսկ 2009 թ. սեպտեմբերին Ղազախստանում ընդունվել է այդօրինակ մի օրենք եւ շքեղություն համարվող սեփականության օբյեկտների ցանկը եւ դրանց հարկային դրույքաչափերը ամրագրվել են հարկային օրենսգրքում: 2007 թվականից սկսած Ռուսաստանում բուռն քննարկումներ են ընդանում շքեղության հարկի մասին օրինագծի վերաբերյալ, մասնավորապես 2007 թվականի հունվարին այդպիսի նախաձեռնությամբ հանդես է եկել Ռուսաստանի Պետդումայի պատգամավոր Ալեքսանդր Բաբակովը, իսկ հետագայում Դաշնային Խորհրդի նախագահ՝ Սերգեյ Միրոնովը: Միջազգային փորձը վկայում է, որ շքեղություն համարվող սեփականության օբյեկտների թվում մասնավորապես նշվում են որոշակի չափաքանակներ եւ արժեք ունեցող բնակարանները, առանձնատները, հողամասերը, մշակույթային արժեք ունեցող արվեստի ստեղծագործությունները, թանկարժեք զարդերը, ուղղաթիռները, ինքնաթիռները, ավտոմեքենաները, առագաստանավերը, մոտոռանավակները, հարստությունը (ունեցվածքը) եւ այլն: Ընդ որում հողամասերի, բնակարանների, առանձնատների հարկային դրույքաչափերի սահմանման ժամանակ կարելուքում է գոտիականության ամրագրման սկզբունքը, որից ելնելով էլ նախատեսվում են համապատասխան մոտեցումներ: Ֆրանսիայում, Գերմանիայում, Ավստրիայում, Շվեյցարիայում, Անգլիայում եւ Եվրոպական այլ երկրներում հարուստ լինելը բավականին թանկ է: Այդ պետություններում մասնավորապես անշարժ գույքի համար սահմանված հարկային դրույքաչափերը միջինը կազմում են այդ անշարժ գույքի արժեքի 1-2 տոկոսը: Ավստրիայում եւ Շվեյցարիայում այսպես կոչված էլիտար վայրերում գտնվող 500-600 քառ. մետր մակերես ունեցող կոտեջի համար նրա սեփականատերը պետությանը տարեկան վճարում է 10-15 հազար եվրո գումար: Ֆրանսիայում հարստության, ունեցվածքի համար հարկ վճարում են այն ընտանիքները, որոնց ամբողջ հարստության, ունեցվածքի արժեքը ավել է 750 հազար եվրոյից՝ անկախ իրենց ունեցած տարեկան եկամտի չափից: Գերմանիայում 2006 թվականին քաղաքացիներից գանձվող գերշահույթների չափը 42-ից բարձրացվել է 45 տոկոսի: Հարստության հարկ են վճարում նաև Իտալիայում: ԱՄՆ-ում շքեղության հարկը մտցվել է դեռևս 1898 թվականին՝ Իսպանիայի դեմ մղվող պատերազմի ծախսերը ֆինասավորելու համար եւ կազմում էր 3 տոկոս: 2009 թվականի սեպտեմբերից Ղազախստանում գործող օրենքի համաձայն եթե թանկարժեք ունեցվածքի՝ այդ թվում անշարժ գույքի արժեքը կազմում է 420 հազարից 1 միլիոն ամերիկայի դոլար, ապա գանձվող հարկի չափը կազմում է 0.75 տոկոս, իսկ 1 միլիոնից ավելիի դեպքում՝ 1 տոկոս: Հետաքրքիր է միջազգային փորձը նաև շքեղություն համարվող անձնական օգտագործման թանկարժեք ավտոմեքենաների հարկման վերաբերյալ: Մի շարք երկրներում (Գերմանիա, Ֆրանսիա) այդպիսի ավտոմեքենաների օգտագործման համար նախատեսված հարկային դրույքաչափերը պայմանավորված են տվյալ ավտոմեքենայի կշռով, չափերով, շարժիչի հզորությամբ, արտանետվող CO2 գազի քանակով: Դանիայում

հիմքում դնելով էկոլոգիական գործոնը ավտոմեքենայի գրանցման համար գանձվում է ավտոմեքենայի արժեքի 105 տոկոսի չափով գումար: Իսկ եթե ավտոմեքենայի արժեքը ավել է 18 հազար ամերիկյան դոլարից, ապա համապատասխան գումարը կազմում է 180 տոկոս: Իսրայելում ավտոմեքենաների հարկման չափորոշիչների հիմքում դրվում են ավտոմեքենայի չափերը եւ վնասակար գազերի արտանետումների քանակը: Այդ պարագայում քաղաքացիները վճարում են հարկ, որի չափը կազմում է տվյալ ավտոմեքենայի արժեքի շուրջ 70 տոկոսը: Ավստրալիայում շքեղ մարդատար ավտոմեքենայի համար վճարում են շքեղության հարկ՝ տվյալ ավտոմեքենայի արժեքի 33 տոկոսի չափով: Ընդ որում շքեղ են համարվում 57 հազար ամերիկյան դոլարից ավել արժեք ունեցող մարդատար ավտոմեքենաները:

Օրինագծի հայեցակարգը, համապատասխան դրույթաչափերը եւ մյուս դրույթները քննարկելի են: Հեղինակը պատրաստ է այդ քննարկումների արդյունքում լրամշակել ներկայացված օրինագիծը: Մեր գնահատականով օրինագծի ընդունումը կնպաստի Հայաստանում սոցիալական արդարության հաստատմանը: